Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Հեռնել մարզարեներին

Ես ծառայել եմ Միացյալ Նահանգների նավատորմում Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտին մոտ: Ես նավաստի էի և նավատորմում հնարավոր ամենացածր աստիճանն ունեի: Ապա ես որակվեցի որպես Առաջին աստիճանի նավաստի:

Ավարտվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմը, որից հետո ես զորացրվեցի: Սակայն ես որոշում կայացրեցի, որ եթե ես երբևէ վերադառնայի զինված ուժեր, ես կցանկանայի ծառայել որպես սպա: Ես մտածեցի. «Ես այլևս չեմ աշխատի ընդհանուր ճաշարանում, այլևս չեմ մաքրի սեղանները, եթե ես կարող եմ խուսափել դրանից»:

Զորացրվելուց հետո ես միացա Միացյալ Նահանգների Ռազմածովային ուժերին: Ամեն երկուշաբթի երեկոյան ես գնում էի վարժանքի: Ես ջանասիրաբար սովորում էի, որպեսզի կարողանայի հանձնել քննությունները: Ես հանձնեցի ամեն տեսակի քննություն, որ կարելի է պատկերացնել՝ մտավոր, ֆիզիկական և էմոցիոնալ: Վերջապես եկավ հիանալի լուրը. «Դուք ստանում եք սպայի կոչում Միացյալ Նահանգների Ռազմածովային ուժերում»:

Ես ուրախ ցույց տվեցի այն իմ կնոջը՝ Ֆրենսիսին և ասացի. «Ես արեցի դա: Ես արեցի դա»: Նա գրկեց ինձ և ասաց. «Դու բավականաչափ ջանասեր ես եղել դրան հասնելու համար»:

Սակայն այնուհետև մի բան պատահեց: Ես կանչվեցի լինելու իմ ծխի եպիսկոպոսության խորհրդական: Եպիսկոպոսի խորհրդի ժողովը նույն երեկոյան էր, երբ իմ նավատորմային վարժանքի ժողովն էր: Ես գիտեի, որ դա հավոր հակասություն էր: Ես գիտեի, որ ես ժամանակ չունեի հետամուտ լինելու Ռազմածովային ուժերի և իմ եպիսկոպոսության պարտականություններին: Ի՞նչ պետք է ես անեի: Պետք էր որոշում կայացնել:

Ես աղոթեցի դրա մասին: Ապա ես գնացի տեսնելու մի մարդու, ով իմ ցցի նախագահն էր եղել, երբ ես պատանի էի՝ Երեց Հարոլդ Բ. Լիին (1899–1973), ով այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումում էր: Ես նստեցի սեղանի մոտ նրա դիմաց: Ես պատմեցի նրան, թե որքան արժեքավոր էր ինձ համար այդ աշխատանքը: Բացի դրանից, ես ցույց տվեցի նրան այն նամակը, որտեղ ինձ հանդիպման էին հրավիրել:

Մի պահ այս խնդրի շուրջ խորհելուց հետո նա ասաց ինձ. «Ահա, թե ինչ պետք է դուք անեք, Եղբայր Մոնսոն: Դուք նամակ կգրեք Ռազմածովային նախարարության վարչությանը և կասեք նրանց, որ եպիսկոպոսության անդամի ձեր կոչման պատճառով դուք չեք կարող ընդունել այդ պաշտոնը Միացյալ Նահանգների Ռազմածովային ուժերում»:

Միրտս նվաղեց: Նա ավելացրեց. «Ապա գրեք Սան Ֆրանցիսկոյի Տասներկուերորդ Ռազմածովային շրջանի պարետին և ասեք նրանց, որ դուք կցանկանայիք հեռացվել ուժերից»:

Ես ասացի. «Երեց Լի, դուք չեք հասկանում, թե ինչ է զինծառայությունը: Իհարկե նրանք կհրաժարվեն ինձ տալ այդ պաշտոնը, եթե ես հրաժարվեմ ընդունել այն, սակայն Տասներկուերորդ Ռազմածովային շրջանը ինձ չի ազատի ծառայությունից: Կորեայում ահագնացող պատերազմում պաշտոն չունեցող սպան անկասկած ծառայության կկանչվի: Եթե հետ կանչվեմ, ես կնախընտրեմ հետ գնալ որպես պաշտոն ունեցող սպա, սակայն ես այն չեմ ունենա, եթե չընդունեմ այս պաշտոնը: Դուք վստա՞հ եք, որ սա է այն խորհուրդը, որն ուզում եք, որ ես ստանամ»:

Երեց Լին իր ձեռքը դրեց իմ ուսին և հայրաբար ասաց. «Եղբայր Մոնսոն, ավելի շատ հավատք ունեցեք: Զինծառայությունը ձեզ համար չէ»:

Ես տուն գնացի: Արցունքներով թրջված հրավերը ես ետ դրեցի ծրարի մեջ դրան կցված նամակի հետ միասին և հրաժարվեցի ընդունել այն: Ապա ես նամակ գրեցի Տասներկուերորդ ռազմածովային շրջանին և խնդրեցի ազատել ինձ Ռազմածովային ծառայությունից:

Ռազմածովային ծառայությունից ես դուրս եկա, երբ կազմավորվում էր վերջին խումբը Կորեայի պատերազմի բռնկումից առաջ: Ես կրում էի իմ վարչության հագուստները: Եպիսկոպոսությունում որպես խորհրդական կանչվելուց վեց շաբաթ անց ես կանչվեցի լինելու իմ ծխի եպիսկոպոսը:

Եկեղեցում ես չէի ունենա այն կոչումը, որն ունեմ այսօր, եթե չհետևեի մարգարեի խորհրդին, չաղոթեի այդ որոշման համար, չգնահատեի կարևոր ճշմարտությունը. Աստծո իմաստությունը հաճախ հիմարություն է թվում մարդկանց:[1] Սակայն ամենամեծ դասը, որը մենք կարող ենք սովորել մահկանացու կյանքում այն է, որ երբ Աստված խոսում է և Նրա զավակները հնազանդվում են, նրանք միշտ ճիշտ կլինեն:

Ասում են, որ պատմության մեջ մանրուքներից են կախված մեծ շրջադարձները, և դա այդպես է նաև մեր կյանքում: Որոշումներից է կախված ճակատագիրը: Սակայն մենք անօգնական չենք թողնված մեր որոշումներում:

Եթե դուք ուզում եք տեսնել երկնքի լույսը, եթե դուք ուզում եք զգալ Ամենազոր Աստծո ոգեշնչումը, եթե դուք ուզում եք ձեր կրծքում ունենալ այն զգացումը, որ Երկնային Հայրն առաջնորդում է ձեզ, ապա հետևեք Աստծո մարգարեներին: Երբ դուք հետևեք մարգարեներին, դուք կլինեք ապահով տարածքում:

ՀՂՈՒՄ

1. Տես Ա Կորնթացիս Բ.14:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Եկեղեցու ոչ շատ անդամներ անձամբ խորհուրդ կստանան Առաքյալից, ինչպես ստացավ Նախագահ Մոնսոնը: Սակայն մենք ևս կարող ենք օրհնվել, եթե հետևենք մարգարեների և առաքյալների ուսմունքներին: Կարող եք կարդալ Նախագահ Մոնսոնի ելույթները վերջին գերագույն համաժողովից (նաև հիշեք նրա բացիչ և եզրափակիչ ելույթները): Փնտրեք գործելու վերաբերյալ առանձնահատուկ ցուցումներ կամ կոչեր: Դուք կարող եք քննարկել ձեր սովորածը նրանց հետ, ում այցելում եք, և խորհել, թե ինչպես կարող եք կիրառել Նախագահ Մոնսոնի խորհուրդը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Խորհուրդներ դժվար ընտրություններ կատարելու համար

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, պատմեց, թե ինչպես է նա հետևել մարգարեական խորհրդին: Մի գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը հորդորեց անդամներին ազատվել իրենց պարտքերից, հատկապես վարկերից:

Նախագահ Այրինգն ասաց. «Ես դիմեցի կնոջս ժողովից հետո և հարցրեցի. «Ի՞նչ ես կարծում, կա՞ որևէ հնարավորություն դա անելու»: Սկզբում մենք չէինք կարողանում»: Սակայն այդ օրը մինչև երեկո նա մտածել էր մի սեփականության մասին, որը նրանք տարիներ շարունակ փորձել էին վաճառել, սակայն առանց հաջողության: «Մենք վստահեցինք Աստծուն և Նրա ծառայի ուղերձին, . . . [ուստի] մենք մի հեռախոսազանգ կատարեցինք: . . .Ես լսեցի մի պատասխան, որը մինչև այժմ զորացնում է իմ վստահությունն Աստծո և Նրա ծառաների հանդեպ»: Այդ նույն օրը մի մարդ առաջարկեց գնել Այրինգների սեփականությունը մի գումարով, որը մի փոքր ավել էր նրանց վարկից: Այրինգները շուտով ազատվեցին պարտքերից (տես «Վստահեք Աստծուն, հետո գնացեք և արեք», *Լիահոնա,* նոյ. 2010, 72–73):

Դուք, միգուցե, չունեք վարկեր վճարելու, սակայն մարգարեական խորհուրդը կարող է առաջնորդել ձեզ այստեղ և այժմ դժվար որոշումներ կայացնելիս աշխատանքի, կրթության, միսիայի և ժամադրության վերաբերյալ: Քննարկեք ձեր ընտանիքի կամ հասակակիցների հետ, թե ինչպես կարող եք հետևել մարգարեին, երբ դուք պետք է որոշումներ կայացնեք:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, January 2015*-ի թարգմանությունը: Armenian 12581 201

Հիսուս Քրիստոսի հատկանիշները. Հնազանդ Որդի

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկչի կյանքը և դերերը հասկանալը ինչպե՞ս կմեծացնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրհնեն նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք ***reliefsociety.lds.org:***

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Հիսուս Քրիստոսի հնազանդության օրինակին հետևելը մեծացնում է մեր հավատքը Նրա նկատմամբ: «Արդյո՞ք դա զարմանալի է,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը,- որ Քրիստոսը առաջինը և ամենակարևորը ընտրում էր իր հոր կամքը, որ նա սիրում էր նրան և հնազանդվում էր նրան և ենթարկվում էր նրան ինչպես հավատարիմ որդի, ինչպիսին էր ինքը: . . . Հնազանդությունը երկնքի առաջին օրենքն է»:[1]

Սուրբ գրությունները սովորեցնում են. «Եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն» (ՎԵՈՒ 130.21): Մենք հոգևորապես աճում ենք, երբ մենք մոտենում ենք Աստծուն հնազանդության շնորհիվ և հրավիրում ենք Փրկչի Քավության զորությունը մեր կյանք:

«Երբ քայլում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին ու պատվիրաններին հնազանդ»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ .Թոդ Քրիստոֆերսոնը: «Մենք վայելում ենք ուխտի մեջ Աստծո կողմից խոստացված օրհնությունների անընդհատ հոսքը: Այդ օրհնություններն ապահովում են միջոցներ, որ կյանքի ճանապարհով քայլելիս մենք ոչ թե հեշտությամբ ներգործվենք, այլ ինքներս ներգործող լինենք: . . .Հնազանդությունը մեզ օգնում է ավելի լավ կառավարել մեր կյանքը, տալիս է ավելի մեծ կարողություն քայլելու, աշխատելու և արարելու համար»:[2]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Ղուկաս ԻԲ.41–46, Վարդապետություն և Ուխտեր 82.10, 93.28

Սուրբ գրություններից

«Կարո՞ղ է ջանասեր ուսանելու և սուրբ գրությունների շուրջ խորհրդածելու արդյունքում ձեռք բերված գիտելիքը փոխանցվել կարիքի մեջ գտնվողին»,- հարցրել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը: «Հստակ պատասխանն է՝ ոչ»:[3]

Տասը կույսերի առակը այս սկզբունքի օրինակն է: Չնայած, որ բոլոր կույսերը վերցրեցին իրենց լապտերները «փեսային դիմաւորելու» համար, միայն հինգն էին իմաստուն և ձեթ լցրեցին իրենց լապտերներում: Մյուս հինգը հիմար էին, քանի որ նրանք «ձէթ վեր չառան իրանց հետ»:

Ապա, աղաղակ եկավ կեսգիշերին. «Ահա, փեսան գալիս է. դուրս եկէք նորան դիմաւորելու»: Բոլոր կույսերը պատրաստեցին իրենց լապտերները, սակայն հիմար կույսերը ձեթ չունեին: Նրանք ասացին իմաստուն կույսերին. «Տուէք մեզ ձեր իւղիցը, որովհետեւ մեր լապտերները հանգչում են»:

Իմաստուն կույսերը պատասխանեցին. «Մի գուցէ մեզ եւ ձեզ բաւական չլինի. բայց . . . գնացէք . . . եւ գնեցէք ձեզ համար»: Եվ մինչ հիմար կույսերը գնացել էին, փեսան եկավ և իմաստուն կույսերը գնացին նրա հետ և «դուռն փակուեցաւ» (Մատթեոս ԻԵ.1-13):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Jeffrey R. Holland, “The Will of the Father in All Things” (Brigham Young University devotional, Jan. 17, 1989), 4, speeches.byu.edu.
2. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Ուխտերի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2009, 21:
3. Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Լիահոնա,* նոյ. 2012, 109:

Խորհեք այս մասին

Որո՞նք են հնազանդության որոշ օրինակները սուրբ գրություններում:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, January 2015*-ի թարգմանությունը: Armenian. 12581 201